

**Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանաց եւ երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի 2015 թվականի**

Հաշվետվություն

Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանաց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2015թ-ի ընթացքում մշակել է իրականացրել է ընտանիքի, կանանց եւ երեխաների պաշտպանությանն ուղղված բազմաթիվ ծրագրեր՝

1. Ուսումնասիրվել են մարզում գենդերային հիմնահարցերը, իրականացվել է գենդերային քաղաքականության եւ ընդդեմ գենդերային բռնության 2014թ-ի ծրագրերը, մշակվել է գենդերային քաղաքականության եւ ընդդեմ գենդերային բռնության 2015թ-ի ծրագիրը:

Բաժնի մասնագետները մասնակցել են <<Պտղի սեռի խտրական ընտրության դեմ պայքար>> թեմայով ծրագրի քննարկմանն և փորձի ու գիտելիքների փոխանակման ցանցի խմբերի գործունեության նկարագրության ներկայացմանը, <<Պեկինի գործողությունների ծրագրի, հազարամյակի զարգացման նպատակների, կանանց քաղաքական իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի կատարմար ընթացքը Հայաստանի Հանրապետությունում>> ծրագրի հաստատմանը:

2. Ոստիկանության համապատասխան ծառայությունների եւ ԽՀՀ-երի հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացնվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական /հատուկ հանրակրթական/ ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 24 երեխա.

Ամփոփ պատկերն է՝

Ընդհանուր	տղա	աղջիկ
24	20	4

հանցագործություն կատարած	իրավախախտ	կրթությունից դուրս մնացած	մուրացիկ / թափառաշրջիկ
12	7	4	1

3. Ուսումնասիրվել են թվով 260 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման եւ գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր եւ ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում:

Ամփոփ պատկերն է՝

- Մանկատներ են տեղավորվել 19 երեխա, որից 2-ը՝ մասնագիտացված մանկատուն:

- Մանկատնից դուրս են գրվել 20 երեխա:
- Կանխարգելվել է 18 երեխայի մուտքը մանկատուն

• Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ընդունելության նպատակով կատարվել է երեխաների և ընտանիքների ուսումնասիրություն, որի արդյունքում 28 երեխա ընդունվել, և 24 երեխա դուրս է գրվել նշված հաստատությունից: Համապատասխան աշխատանքի և խորհրդատվության արդյունքում կանխարգելվել է 25 երեխայի տեղավորումը խնամքի հաստատություն:

Հաստատության անվանումը	Տեղավորում	Դուրս գրում	Կանխարգելում
Վանաձորի մանկատուն	19	20	18
Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն	28	24	25

4. <<Նորք>> ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել և փոփոխության են ենթարկվել թվով 150 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ՝ դրանում հաշվառելով՝

ա) 21 առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձնանց եւ օրենքով սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն կենտրոնացված հաշվառման:

բ) 15 որդեգրել ցանկացող անձանց (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցվել են հաշվառման մատյանում, լրացվել որդեգրողի թեկնածուի անձնական քարտը եւ, պատճենը փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն,

գ) 16 որդեգրման ենթակա երեխաների տվյալները եւ անձնական քարտի պատճենները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

դ) 2 մանկուց հաշմանդամ երեխաներ

ե) 28 երեխաներ խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում գտնվող

զ) 19 մանկատանը գտնվող երեխաներ

և փոփոխելով կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 30 երեխաների գործերը Ամփոփ պատկերն է՝

Որդեգրված երեխաների թիվը	Հաշվառված քաղաքացի	Հաշվառված երեխա	Մերժում
1	15	16	0

ԱԾԽՄ մարզային հաշվառում	ԱԾԽՄ կենտրոնացված հաշվառում
-------------------------	-----------------------------

21	21
----	----

• Կատարվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **312** երեխայի վկայագրում:

Ներառական դպրոցներ

Դպրոց	Երեխաների թիվը / 2015թ-ի ն վկայագիր ստացած/
Վանաձորի թիվ 6 հ/դ	11
Վանաձորի թիվ 16 հ/դ	17
Վանաձորի 17	3
Վանաձորի 18	20
Վանաձորի թիվ 25	17
Վանաձորի թիվ 27	10
Վանաձորի թիվ 28	10
Վանաձորի թիվ 30	8
Ստեփանավանի թիվ 1	18
Ստեփանավանի թիվ 2	6
Ստեփանավանի թիվ 3	21
Ստեփանավանի թիվ 6	32
Ստեփանավանի ավագ	5
Կուրթան	6
Սպիտակի թիվ 3	11
Սպիտակի թիվ 8	2
Ախթալայի դպրոց	1
Ալավերդու թիվ 2	20
Ալավերդու թիվ 5	4
Ալավերդու թիվ 7	11
Ալավերդու թիվ 12	11
Թումանյանի դպրոց	1

Քաղաքացի	3
----------	---

Հատուկ դպրոցներ

Վանաձորի հատուկ	16
Սպիտակի հատուկ	16

6. <Առավոտ> ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է ուսումնասիրություն և

- կանխարգելվել է 30 երեխայի մուտքը խնամքի հաստատություն և մանկատուն,
- բեռնաթափման ծրագրի շրջանակներում ընտանիք է վերադարձել Վանաձորի մանկատան 7, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 հաստատության 5, Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 3, Սպիտակի թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 6 երեխա

7. Բաժնի մասնագետները մասնակցել են խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների նիստերին, որտեղ քննարկել են երեխայի հետ կապված հատուկ դեպքեր, լուծվել են առկա տարաձայնություններ՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը:

8. Իրականացվել են երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն խնամքի հաստատություններում, հատուկ հաստատություններում եւ ներառական դպրոցներում:

9. Ուսումնասիրվել են մարզի ԽՀՀ-երի գործունեություններ, կատարվել է խորհրդատվություն ԽՀՀ-ների աշխատանքների վերաբերյալ:

10. Բաժնում կատարվել է մոտ 480 քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում տրվել են համապատասխան ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական:

11. Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ

ա) Վանաձորի մանկատուն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների համար տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություն

բ) խնամատար ընտանիք այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում, հյուրասիրություն եւ նվիրատվություն

գ) Տաշիրի <Փոքրիկ Իշխան> կենտրոն այցելություն, տոնական մթնոլորտի ձեւավորում, նվերներ երեխաներին,

դ) Տաշիրի <Տիրամայր Հայաստան> կենտրոնի բնակչներին այցելություն

12. 2015 թվականի ընթացքում ԸԿԵԻՊ բաժնի մասնագետները մասնակցել են պետական կառույցների եւ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող գենդերային քաղաքականության եւ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված, սեմինարների եւ կլոր սեղանների: «Աջակցություն քրեական արդարադատության և քրեակատարողական համակարգի բարեփոխումներին» ծրագրի շրջանակներում կազմված

աշխատանքային խմբին անդամակցելով՝ մասնակցել են «Անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելմանն ուղղված ազգային ռազմավարական ծրագրի» մշակմանը:

13. Համաքաղաքային «ԲԱՐԻՆ ԱՐԱ» ակցիայի ընթացքում բաժինը ցուցաբերել է աջակցություն, ընդգրկվել է ժուրիի կազմում և գնահատել իրականացված միջոցառումները:

14. Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին ուղղված «Դիակոնիա» կազմակերպության աջակցությամբ իրականացվել են հումանիտար օգնության ծրագրեր՝ սննդի, հագուստի, գրենական պարագաների տեսքով: «Դիակոնիա» կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է մոտ 80 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը ճամբարում:

15. Ամերիկյան «Ամքոր» կազմակերպության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ իրականացվել է հումանիտար օգնության ծրագիր չոր սննդի տեսքով:

Ընտանիքի, կանանց եւ երեխաների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ

Ն. Սարգսյան